

տրոս եւ Պօղոս, լեալք ամուլք հաւատոյ՝ շրջեցան յամենայն գաւառս արեւելեայ աշխարհիս, քարոզէին ամենեցուն զճմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին դպրոցս, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջին հետիոտս զնալով, ոչինչ առնուն յումեքէ, այլ միայն զկերակուրս, եւ զբոլոր շաբաթն պահէին»:

Անոնք կը քարոզէին պարզ կեանք, աստուածադիր պատուիրաններու եւ եկեղեցական կանոններու հպատակութիւն, կը ձագէին ամէն զեղծում եւ երկրապաշտ կենցաղ: Կը կանգնէին եկեղեցիներ, կը նորոգէին աւերակ տաճարները, կը հաստատէին հոն ժամասացութիւն, կը բանային դպրոցներ, կը հաւաքէին աշակերտութիւն եւ անձամբ կամ իրենց ձեռքի տակ կըթուած ուսուցչութեամբ կ'ուսուցանէին մանկանց: Կը դասաւանդուէր կանոնաւոր ժամակարգութեան եւ ժամասացութեան կերպը. լռութեան մատնուած տաճարները կը սկսէին միւսանգամ թնդալ սաղմոսերգութեամբ: Գրքերը, որոնք փակուած էին երկար տարիներէ ի վեր, կը բացուէին, կը մեկնուէին եւ դաստիարակները կ'ըլլային նոր սերունդին:

Յիշատակագիր մը կ'արձանագրէ այս շրջանէն, ի Դաւրէժ, Հարանց վարքի վերջը. «Բայց զոհանամ զԱստուծոյ, որ այսպիսի ժամանակիս Անապատ հաստատեցաւ եւ եր-